ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՊՈԵՄՆԵՐՈՒՄ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Լ. Հ.

Հ. Թումանյանի ստեղծագործությունը վիթխարի, դարակազմիկ երեվույթ է առհասարակ մեր գեղարվեստական մտքի պատմության մեջ: «Ի՞նչն է ուրեմն Թումանյանին դարձնում առանձնապես սիրելի,- հարց է տալիս Ստ. Զորյանն ու պատասխանում,- իհարկե՝ նրա արվեստը: Նրա պարզ, վսեմ, ռեալիստական արվեստը, որն իր մեջ խտացնում է ըստ ամենայնի ազգային ձևեր, ազգային պատկերներ և բնաշխարհի պայծառ լեզու: ... Միաժամանակ նա օժտված է ճշմարիտ արվեստագետի չափի մեծ զգացումով: Բոլորից ավելի: Նաև խոսքի նուրբ զգացողությամբ: ... Այո՛, Թումանյանը իր արվեստով նման է կախարդի. բնավ չեք զգում, որ գրել է, թվում է՝ երկը ժողովրդական մի կենդանի խոսք է իր ձևերով, երանգներով ու հույզերով»[1]: Իրավացի է Ստ. Զորյանը. Թումանյան երեվույթի մի էական բաղադրիչը լեզուն է՝ կախարդանքի հասնող: Իհարկե, հանճարեղ լոռեցու ստեղծագործության լեզվի մասին գրվել են մենագրություններ, ուսումնասիրություններ, հոդվածներ, սակայն այդ լեզուն այնքան հարուստ է ու բազմաշերտ, որ անընդհատ կարելի է վեր հանել նոր նրբերանգներ ու իրողություններ: Փորձենք ներկայացնել բարդ ստորադասական նախադասության դերը Թումանյանի խոսքարվեստում (պոեմներում), այդ տեսակի նպաստը թումանյանական ոճի համակարգին: Նախ դիմենք վիճակագրությանը: Հ. Թումանյանի 5 պոեմներում՝ «Անուշ», «Թմկաբերդի առումը», «Լոռեցի Սաքոն», «Մարոն» և «Հառաչանք», հանդիպեց 52 բարդ ստորադասական նախադասություն: Սա նշանակում է, իհարկե, որ բանաստեղծի լեզվում իշխող է պարզ նախադասությունը, և լեզվական այդ կառույցը նպաստում է թումանյանական խոսքի պարզությանը և ի վերջո ոճի ձևավորմանը: Սակայն, մյուս կողմից, պետք է նկատել, որ թումանյանական խոսքին խորթ չեն նաև բարդ նախադասությունները և մասնավորապես ստորադասական կառույցները, որոնք մերվում են հեղինակի ոճին, բնավ խրթին չեն դարձնում այն, ոճականորեն հարիր են պարզ նախադասությանը, որովհետև կառուցվածքով հեշտամարս են, թումանյանական յուրահատուկ դրոշմ ունեն և մատչելի են:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասությունները անհամեմատ ավելի քիչ են, առավել իշխող են բազմաբաղադրիչ ստորադասական կառույցները: Սա շատ բնական է, արտառոց ոչինչ չկա, քանի որ բանաստեղծական խոսքը հաճախ ենթադրում է քառատողեր և ավելի ծավալուն կառույցներ, որոնցում և իշխող են բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասությունները: Այս հատկանիշով չափածո խոսքը տարբերվում է արձակից: Նկատելի է, որ երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություն-

[1] **Զորյան Ստ.,** Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. I, Ե., 1969, էջ 7-8:

ներ կան պոեմների այն հատվածներում, որտեղ իշխող են երկտող կառույցները: Օրինակ, «Մարո» պոեմի այս հատվածում կան երեք երկտող կառույցներ. 2-ը՝ համադասական, 1-ը՝ ստորադասական:

- Ջաղացիդ միշտ հերթ լինի,
Մեջքդ ամուր բերդ լինի ...
Իսկ երբ հնչեց «տարան հա՞»-ն,
Նրան փեսի տուն տարան:
Պսակեցին Մարոյին,
Տվին չոբան Կարոյին[2]*:*

Նկատենք նաև, որ այս կարգի երկբաղադրիչ կառույցները՝ և՛ համադասական, և՛ ստորադասական, բնականաբար, մերվում են թումանյանական չափավոր ու զուսպ խոսքին և նպաստում նրա խոսքի պարզությանը: Ինչպես հայտնի է, հեղինակը չի սիրում խոսքի ավելորդ պերճություն, նախադասությունների տարափ. անբռնազբոսիկությունն ու պարզությունը, ինչ խոսք, նրա ոճի ամենակարևոր բնութագրիչներն են: Պոեմներում որոշ երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություններ ուղղակի վերածվել են թևավոր խոսքերի: Ահա մեկ-երկու օրինակ «Թըմկաբերդի առումից».

Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին,
Թե չլինին
Կինն ու գինին (էջ 188):
Ուր ահեղ կռվով չի մտնիլ արքան,
Ղոնաղ է աշուղն իրեն սազի հետ (էջ 189):

Թումանյանի պոեմներում բազմաբաղադրիչ կառույցները հեշտամարս են, երբեք չեն ստեղծում ոճի խճողում, անգամ 7-8 բաղադրիչներից բաղկացածները լիովին համահունչ են հեղինակի խոսքի պարզությանը, և ընթերցողը բնավ չի զգում բազմաստիճան այդ կառույցների ծանրությունը: Ահա մի դասական օրինակ «Անուշից».

Ա՜խ, Անու՜շ, Անու՜շ, էդ ի՞նչ ես ասում.
Բա դու չե՞ս լսում.
Էն, որ լանջերին խաղեր եմ ասում,
Ո՞ւմ հետ եմ խոսում ...
Էն, որ գիշերով շհու եմ փչում,
Էն ո՞ւմ եմ կանչում ...
Էն, որ մոլորված նստած եմ մնում,
Ո՞ւմ հետ եմ լինում ...
Էն, որ հառաչում ու ախ եմ քաշում,
Էն ո՞ւմ եմ հիշում ... (էջ 81):

Այս կարգի բազմաբաղադրիչ բարդ ստորադասական կառուցվածքների դյուրամարսությանը նպաստում են ժողովրդական ոճին հատուկ լեզվական այլ իրողություններ՝ կրկնություններ, ժողովրդախոսակցական բառեր ու արտահայտություններ, յուրահատուկ հեշտամարս հնչերանգ, պարզ լեզվամտածողություն և այլն: Ճիշտ է այն կարծիքը, որ «բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության յուրահատ-

[2] **Հ. Թումանյան,** Երկերի ժողովածու, հ. I, Ե., 1969, էջ 26 (այսուհետև սույն հատորից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից):

կությունը միայն բաղադրիչների քանակի մեջ չէ, այլև այն բանում, որ այդպիսի նախադասության մեջ հանդես են գալիս հարաբերությունների զուգորդումներ»[3]: Մեր տվյալներով, բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություններով հարուստ են «Լոռեցի Սաքոն», «Հառաչանք», «Թմկաբերդի առումը», «Անուշ» պոեմները: Հայտնի է, որ բազմաբաղադրիչ ստորադասական նախադասությունները բաժանվում են 4 տարատեսակի՝ ենթաստորադասական, համաստորադասական, անհամասեռ ստորադասական և հանրաստորադասական[4]: Ինչպես իրավացիորեն նշում է պրոֆ. Գ. Գարեգինյանը, «նրանց գործածությունը մեծապես կախված է հեղինակի ոճից, նրա մտածողությ ան եղանակից: Նկատելի է նաև, որ հեղինակից հեղինակ տարբեր են լինում նաև բազմաբաղադրիչ նախադասությունների կառուցվածքային տիպերի գործածության համամասնությունն ու հաճախականությունը»[5]: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Թումանյանի պոեմներում բոլոր չորս կառուցվածքներն էլ հանդիպում են, առավել հաճախական են համաստորադասական և ենթաստորադասա-կան տարատեսակները: Այսպես, առավել հաճախական կառույցը՝ համաստորադասականը, հանդիպում է «Մարո», «Թմկաբերդի առումը», ամենից շատ՝ «Անուշ» պոեմներում: Ահա բազմաթիվ օրինակներից մեկը «Անուշից».

Բայց լալիս է նա ու երգեր ասում,
Ու միշտ էն անմիտ տրտունջն է խոսում,
Թե ինչպես հանկարծ աշխարքը փոխվեց,
Ինչպես դատարկվեց կյանքում ամեն բան,
Սարերը մնացին որբ ու անչոբան,
Թե ինչպես հանկարծ նա գնաց հեռու,
Էլ չի դառնալու՜, էլ չի դառնալու՜ ... (էջ 99-100):

Պոեմի այս հատվածում նախադասության այս կառույցի կիրառությունը պատճառաբանված է նրանով, որ հերոսուհին դուրս է եկել հոգեկան հավասարակշռությունից և «անմիտ տրտունջների» շարան է ասում, ուստի 5 նույնաբնույթ երկրորդական նախադասություններով համաստորադասությունը հոգեկան այդ վիճակն արտահայտելու հարմար լեզվական միջոց է: Իսկապես, ճիշտ է նկատված, որ «նախադասության յուրահատուկ շարահյուսական կառուցվածքով ավելի խոսուն և տարողունակ է դառնում բառը, ավելի հնչուն ու արտահայտիչ են դառնում պատկերավորման միջոցները, ընդհանրապես խոսքը»[6]:

Ենթաստորադասական նախադասություններով առավել հարուստ են «Հառաչանք» և «Անուշ» պոեմները: Մի օրինակ «Հառաչանքից».

Երեք թագավոր, ասում են, իբրև,
Խելքս չի կտրում, որ էսպես լինի,
Խորհուրդ են արել, որ այսուհետև
Իր թախտից զրկվի, ով կռիվ անի (էջ 66):

---

[3] **Աբրահամյան Ս. և ուրիշներ,** Հայոց լեզու, մաս II, Ե., 1975, էջ 148-149:
[4] Տե՛ս **Պապոյան Ա., Բաղիկյան Խ.,** Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 383:
[5] **Գարեգինյան Գ.,** Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1984, էջ 340:
[6] **Հարությունյան Հ.,** Գեղարվեստական խոսք, Ե., 1986, էջ 165:

Այս ենթաստորադասական նախադասությունը, որի կազմում առկա է նաև միջանկյալ բարդ ստորադասական նախադասություն, կրկին խրթին չէ, կրկին հեշտամարս է և թումանյանական անխառն լեզվամտածողությամբ կառույց է: Բերենք նաև անհամասեռ ստորադասական և հանրաստորադասական նախադասությունների մեկական օրինակ «Թմկաբերդի առումը» և «Հառաչանք» պոեմներից.

Խմում են կռվող քաջերի փառքին,
Որ կռվի դաշտում կյանք չեն խնայում,
Եվ ընկածների սուրբ հիշատակին,
Որ երկնքիցն են այժմ իրենց նայում ... (էջ 192):

Իսկ երբ որ հասանք աղքատիկ դափին՝
Ինձ հրավիրեց և յուր ունեցած
Շորի կտորը փռեց իմ տակին,
Ինքը առաջիս մնաց լուռ կանգնած (էջ 63):

Այժմ տեսնենք, թե բարդ ստորադասական նախադասությունների համակարգում ի՞նչ բնույթի երկրորդական նախադասություններ են առավել հաճախական Հ. Թումանյանի պոեմներում: Վիճակագրությունը ներկայացնում է այսպիսի պատկեր. ամենից հաճախականը ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունն է (18 դեպք), այնուհետև՝ որոշիչ երկրորդականը (13), հետո՝ պայմանի պարագան (10), մյուսը՝ ժամանակի պարագան (7): Հանդիպել են մեկական ենթակա, ստորոգելի, չափի, ձևի, տեղի և նպատակի պարագա երկրորդական նախադասություններ: Ընդհանրապես չեն պատահել հատկացուցիչ, բացահայտիչ, անուղղակի խընդիր երկրորդականով բարդ ստորադասական նախադասություններ: Այս տվյալները ևս որոշակի պատկերացում են տալիս հեղինակի լեզվի շարահյուսական համակարգի, նրա նախընտրած լեզվական կառույցների և ոճի մասին: Հայտնի է, որ բարդ նախադասության բաղադրիչները կապակցվում են երկու ե-ղանակով՝ զոդվածով (շաղկապներով ու հարաբերական դերանուններով) և շարահարությամբ: Ինչպես իրավացիորեն նկատում է պրոֆ. Լ. Եզեկյանը, «զոդվածով կառույցներն ավելի շատ բնորոշ են նորմավորված ոճերին, քանի որ արտահայտում են ավելի հետևողական, պատճառաբանված, աներկբա հարաբերություններ, այսինքն՝ ապահովում են խոսքի տրամաբանականությունը, պատճառահետևանքային կապը: Շարահարությունը կապակցության այնպիսի եղանակ է, երբ բարդ նախադասության բաղադրիչները իրար հետ միավորվում են առանց շաղկապների կամ շաղկապող մեկ այլ բառի (հարաբերական դերանունների): Այս դեպքում կարևոր նշանակություն է ձեռք բերում նաև խոսքի հնչերանգը: Շարահարական կապակցությանն ամենից առաջ բնորոշ է ժողովրդական լեզվամտածողությունը»[7]: Ինչպես և սպասելի էր, Հ. Թումանյանի պոեմներում իշխող է բարդ ստորադասական նախադասությունների բաղադրիչների շարահարական կապակցությունը, ընդ որում նույն պատկերն է նաև բարդ համադասական նախադասության դեպքում, ինչ-

[7] **Եզեկյան Լ.,** Ոճագիտություն, Ե., 2003, էջ 330:

պես արդեն առիթ ենք ունեցել նկատելու[8]: Շարահարական կապակցության բազմաթիվ օրինակներ կան «Հառաչանք»,«Անուշ», «Մարոն» պոեմներում: «Հառաչանքում» ծերունի գյուղացին բողոքում է իրենց կյանքից, հոգսաշատ առօրյայից, և նրա խոսքի տարբեր հատվածներում հեղինակը տեղին կիրառել է շարահարական կապակցություն, որը խիստ հարիր է պոեմի հերոսի լեզվամտածողությանը.

Ո՞վ է մեղավոր: Միտք եմ անում, միտք,
Ու չեմ հասկանում ով է մեղավոր.
Բայց իմ կարճ խելքով էնքանն եմ տեսնում –
Ապրիլ չի լինիլ էսպես ամեն օր (էջ 72):

Այս փոքրիկ քառատողում թումանյանական ոճի ձևավորմանը նպաստում են շատ նրբերանգներ՝ հարադիր բառեր, կրկնություն, թումանյանական հայտնի էսպես, էնքան ժողովրդախոսակցական ոճին բնորոշ բայաձևեր, պարզ հարցադրում, և այս ամենին գումարվում է նաև շարահարական կապակցությունը՝ իր նպաստը բերելով թումանյանական լեզվարվեստի կերտմանը: «Անուշ» պոեմում հերոսուհու մտորումներում անընդհատ առկա են շարահարական կապակցությամբ կառույցներ.

Ա՜խ, իմ բախտը կանչում է ինձ,
Չեմ հասկանում՝ դեպի ուր ... (էջ 85):
Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պես,
Մնում էր յարին,
Ու չեկավ նա տես (էջ 80):

Այսպիսով, բարդ ստորադասական նախադասությունը որոշակի տեղ և ոճական դեր ունի հանճարեղ բանաստեղծի պոեմների լեզվում, մերվում է նրա լեզվի համակարգին, շաղկապվում և՛ համադասական, և՛ պարզ նախադասություններին, բնավ չի խոչընդոտում թումանյանական պարզ լեզվամտածողությանը, նպաստում է նրա խոսքի բնական ու անբռնազբոսիկ ծավալմանը:

СТИЛИСТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ СЛОЖНОПОДЧИНЕННОГО ПРЕДЛОЖЕНИЯ В ПОЭМАХ ОВ. ТУМАНЯНА

АЙРАПЕТЯН Л. Г.

Резюме

Сложноподчиненные предложения придают особую стилистическую окраску поэзии Ов. Туманяна, в частности его поэмам, создавая присущую ему языковую систему, являющуюся отражением своеобразного лингвомышления поэта. В пяти поэмах Туманяна (“Ануш”, “Взятие крепости Тмка”, “Маро” и т. д.) число сложноподчиненных предложений достигает 52, что вовсе не нарушает стилистики поэта.

[8] Տե՛ս **Հայրապետյան Լ. Հ.,** Բարդ համադասական նախադասությունների ոճական արժեքը Հ. Թումանյանի պոեմներում (Կրթությունը և գիտությունը Արցախում, 2005, N 5-6):